ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22.03.2016թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77[1]-77[4] հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի հունվարի 18-ի N 5-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ագարակ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, առողջապահության, քաղաքաշինության, առևտրի և ծառայությունների, պաշտպանության, բնության և շրջակա միջավայրի պահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ագարակ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Նաիրա Համբարձումյան _____

Արման Մխիթարյան _____

Գագիկ Հախինյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Սամվել Խառատյան _____

Համայնքի ղեկավար՝
Ռուբեն Բարխուդարյան _____